հաննէս Սսեցու հետ, որ աշակերտել է Եսայի Նչեցուն և Մեսրոպ վարդապետին (*)։

Մկրտիչ քահանան 1298 թուին Գլաձորում գրել է սկսել Կաթուղիկեայց և Յովհաննու Յայտնութեան մեկնութիւնները, «էր ընդ եղբարցս» և Դաւիթ Անյաղթի Խաչի Ճառը։ Յիշատակարանը գրուած է № 94/3276 ձեռագրում պահուած Մատթէոս Կիլիկեցու հետևողութեամբ, միայն տեղի և անձանց անունները փոխելով, այն գովեստը, ինչ որ այնտեղ ասուած է



Պատկեր 202.

Ներսէս վարդապետի համար, այստեղ յատկացուած է Նչեցուն, նիւթն էլ ընդօրինակութիւն է նոյն ձեռագրից։ Գրիչը իւր մասին ասում է, որ եկել է

«ՅԱրարատէ հուչակելի
Որ յորկորկի Նաթելենի.
Ի ստորոտն Արագածի,
Լերին մեծի և անուանի.
Մերձ ի գղեակն է ի Բրկնի (?!)
Առ սահմանաւքն Կոտայի»։

Մկրտիչ քահանան նոյն տարին վախճանուած Գրիգոր Բրկնեցու աշակերտն է, իսկ Բրկնոյ եպիսկոպոսն է «տր. Յովէս. արհեպիսկոպոս», որ Գրիգորի քրոջ որդին է. Մկրտչի եղբայրն է Յովանէս քահանայ. յիշատակարանը վերջից պակաս է, թերթ ընկած լինելու պատճառով, բայց միայն վերջին տողերը։ Նոյն Մկրտիչն ունի մի ուրիշ յիշատակարան 261բ.

«Ընդ նմին եւ զեղկելիս
Զվերագծող այսմ տառիս
Ի մենաստանս Գլաձորիս,
Ընդ հովանեաւ սբ. Ստեփանոսիս,
անուանակիր մգ.էիս
ձեռամբ անարժանիս Մկչիս.
եւ զերանուն կրաւնաւորիս,
որ սպասաւոր եմ լեալ բանիս,
միայն անւամբ ու ոչ ըստ գործիս.
ընդ խնամաւք վարժապետիս
Որ յորկորկի իսկ Եսայիս»։

Ապա խնդրում է յիշել իւր բարեւնու Բրկնեցու հետ «եւ զպատանիս իմ զՍարգիս, որ ընդ իս եւ սա իսկ պանդխտիս» (Ցաւել. Բ. 74, պատկ. 203)(*)։

Այս մի և նոյն գրիչը «ի թուականութիւն. հայկազեանս տումարի յարաբարդեալ ամաց հինգ եւ տասն յինանեկաց ընդ միակի չարամանելոյ», այսինքն է Հայոց ՉԾԱ. և քրիստոսական 1302 թուին աւարտել է Թեղենեաց վանքում Եսայի Նչեցու կողմից պատուիրած Ներսէս Լամբրոնացու Սաղմոսաց մեկնութիւնը։ Գրիչը իւր ընդարձակ և կարևոր յիշատակարանի մէջ տալիս է ձեռագրի ծագման մասին հետաքրքիր տեղեկութիւնները. «բայց առաջին սկիզբն գրութեան. սորա եղեւ ի գաւառին Վայոց ձոր կոչեցեալ ի սբ. եւ ի գերահռչակ ուխտն Գլաձոր անուանեալ, որ է երկրորդ Աթենս. ձեռամբ ուրումն՝ սրբազան քահանայի առն իմաստնոյ եւ ճարտարի ա Աճառունչ կտակարանաւքն վարժեալ, սպասաւոր գոլով բանի, մերձ ի կատարելութիւն., Յովհաննես անուն, որ էր ի հռչակաւոր քաղաքէն Եղնկայ կոչեցեալ. արդ զկես մեկնչի Սաղմոսիս գրեաց սոյն այր. եւ ապա սակաւ ինչ այլ ոմն Վարդան անուն ի Նահանկեն Կիլիկիոյ»։ Ապա յայտնում է, որ «ըստ պատահման ինչ դիպեցաւ վերյիշեցեալ բաբաբաբեին ելանել յիւրոյն կայանէ եւ երթեալ, շրջէր յԱյրարատեան գաւառն, ի վանորայսն, որ յայնմ նահանկի, աղաւթից պատճառաւ», և մի ամբողջ տարի այստեղ այնտեղ շրջելուց յետոյ՝ կրկին գալիս է իւր մենաստունը Վայոց ձորում և հրամայում է գրչին երկու նախընթաց գրիչների կիսատ թողած գործը լրացնել։ Գրիչը իւր կարողութիւնից վեր է համարում այս գործը, «այլ ի յոլով խնամս վայելեալ նախայիշեցեալ սբ. բաբունապետին եւ անիճահ վար(կու?)ցեալ զանց առնել զպատկառեցուցիչ հրամանաւ նորին» ձեռնարկում է, յոյսն Աստուծոյ վե-

(*) Ալիշան, Սիսուան, 517։

(*) Ձեռ. էջմ. 1395/1409, 310բ։